

ՓԵՐԱՆՔՆԵՐ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՍԷՓԷՎԵԱՆ ԱՐՈՒԵՍՏԻՑ

17րդ դարի որմանկարչական արուեստի թանկագին մնացորդներ իշխում են նաև Նոր - Զուղայի Դաշտի փողոցում բազմած մի հին ապարանքում, որ կառուցուել է Շահ-Աբբաս Բ-ի ժամանակաշրջանում և այժմ պատկանում է Բոլղեան գերդաստանի ժառանգներին: Դա երկ-յարկանի մի շինություն է, որի վերնադարկի ալակողման սենեակի մեծադիր նկարները պերճախուս վկաններ են սեփեվեան գեղարուեստի խորութեան ու գեղեցկութեան:

Բարի, համեստ և հլուրատէր երիտասարդ տիկին Աննան, ապարանքի գլխավոր ժառանգը, առաջնորդում է ինձ պատմական նկարագրող սենեակը: Առաջին հայեացքից մի ծանր տպաւորութիւն ճնշում է հոգիս՝ հագեղան աշխարհը, երբ կանգ եմ առնում լքուած, մինաւոր գեղարուեստական սենեակում, ուր ներքեւի պատերի վրայ վրձնուած նկարները, դժբաղդաբար, ծածկել են սպիտակ ծեփով: Պահպանուել են միայն վերեւի դռնակներում գծուած պատկերները:

Ժողովրդական վառ երեւակայութիւնը նկարչական այս սենեակի հետ եւս ներդաշնակել է դրուագներ: Այնտեղ Իրանի գեղուհիները մի ժամանակ հիսել են քնարական զոգոտրիկ երգեր և երգել. նրանք պատմել են նաևս վիպական հեքիաթներ. հնչել են թառի կամ քէմանչէի նուրբ լարերը, և նունազոյն գինին հոսել է սիրունների աշխարհում: Բայց այժմ... մի խորին լուռութիւն թաղաւորում է սենեակում... Եւ մտախիճ ապրում եմ անցեալի յուշերով: Սակայն, դա միայն մի վայրկեան է: Շուտով հայեացքս զբաւում են դռնագեղ ուրմանկարները, որոնք իրենց խոսուն աչքերով լուռ նայում են վերեւի դռնակներից: Նրանք՝ ասես՝ ուղուժ են լեցու առնել հին դարերի միջից և պատմել իրենց անցեալի փառաւոր ու հարուստ կեանքի էջերը: Ասես՝ ցանկանում եմ մի անգամ էլ վայելել կեանքի գեղն ու հրապոյրը:

Շուտով խոհերիս յաջորդում են նոր մտքեր, — ո՛ւմ վրձինին պատկանում են այդ մեծաբոկէջ ուրմանկարները և ո՛վ է այն գեղարուեստագէտը, որ ապագայ սերունդներին յիշատակ է թողել որմանկարչական արուեստի այդ գեղեցիկ կոթողը:

Հակառակ պատերի վրայ ևս դռնակներում կատարած կրկնակի որմունքներն, չեմ գտնում մի որեւէ պերճախուս երկող, մի որեւէ յիշատակագիր: Այստեղ էլ տաղանդաւոր ֆիգարիչը, հաւատարիմ մնալով ժամանակի ոգուն, խաբբեր է իր դիմագիծը: Սակայն, չնայած այդ հանգամանքին, կայ մի միջիւրէնական երեւոյթ. կանգուն են նրա կերտած գեղարուեստական որմանկարները, որոնք վկայում են այնպիսի նկարչի ձեւագիւրուած ու համարձակ վրձինի, նրա գունաւորումի խոշոր կարողութեան և արուեստի խորութեան մասին, մի գեղարուեստագէտ, որն իր նուրբ ստեղծագործութիւններով ճոխացրել է Նաբ Զուղայի սեփեվեան որմանկարչութեան գեղեցիկ շարքը:

Սենեակը զարդարում են գլխաւորապէս տասներեք մեծադիր իրանական ու եւրոպական տիպարներ, որոնք զբաւում են ձեզ նախ իրենց ցնդային առանձնայատկութիւններով: Արեւելքի և Արեւմուտքի այդ ուժեղ հալաղդուրիւնը նկարչի ներդաշնակութեամբ և ցայտուն գծերով: Նա շունչ է տուել անշունչ պատկերին, վրձնելով մէկը միւսից կենդանի և արտայայտել զէմբեր, որոնք առաջին հայեացքից խոսում են նկարչի ինքնուրոյն ոճի մասին և միաժամանակ նշում, որ նա իր ժամանակաշրջանում փայլել է ո՛չ միայն որպէս վարպետ դիմանկարիչ, այլ ևս հոգեբան - քանդակագործ - նկարիչ, որը կարողացել է իր գծած տիպարների ներքին աշխարհը, նրանց քարերեզական ապրումներն ու մտորումներն արտայայտել գեղարուեստական հմտութեամբ: Եւ իրօք, սենեակն՝ ասես՝ դիմանկարչական արուեստի մի փոքրիկ ցուցահանդէս է, ուր նկարուած

առանձին դէմքերի եւ նրանց էական յատկանշաների գծադրութիւնն ամբողջութեան հետ ա՛յն աստիճան ներշնչանակ է եւ կատարեալ, որ դո՛ւք խորապէս ապրում էք սենեակի նկարչական բանաստեղծութիւնը:

Բայց որմնակարներն ունեն մի այլ յատկանշական նրբութիւն եւ գեղեցկութիւն: Դա արգազարկան խոշոր արժէքն է: Իրանական եւ հարոպական զգեստները գծուած են ա՛յնքան հարգատեղ գեղեցկութեամբ, որ ցայտուն տեսնուած էք արդէն պատմութեան դիրքին անցած դարաշրջանի ուրոյն հազուատի այլապան ձեւերը:

Սալայն, կայ մի անմխիթար երեւոյթ, որը դիտում էք սրտի խոր կսկիծով: Դա այն անողորմ աւերումն է, որ ժամանակը դանդաղ եւ աստիճանաբար զործել է սեփեմական արուեստի աշտնշելի մնացորդները մի քանիսի վրայ:

Կանգ եմ ունեւում վարպետ վրձինով գծուած որմնակարներից մէկի առջեւ: Դա մի գեղապէս Պարսկուհի է, ճկուն, բարձեւ իրանով, համալսի ու քնքշի կազմուածքով, որի ժպտուն դէմքի եւ բանաստեղծական արտայայտիչ սեւ աչքերի մէջ կարդում էք եւ սէր, եւ անկեղծութիւն, եւ քնքշութիւն: Նրա նուրբ դիմապոնն առանձին դրաշնութիւն են տալիս կամար սեւ յոնքերը, բարա՛լ չրթները, փոքրիկ բերանը եւ ուրրուն սեւ վարսերը: Կանգնել է նա իր պարթեւ հասակով եւ ալ ձեռքի կամոյր գինիով լցուած սպիտակ ալ սկէ երկարալիզ գեղեցիկ չէի վերեւի մասը քնշուած կանգնել է դռուն, խի ձախ ձեռքով բարձր պահել է գինիով լի փոքրիկ ոսկէ բաժակ: Գնդորթին փայլում է Թանկապին կապոյա Փերուլով ոսկէ մատանին:

Այս նկարով տաղանդաւոր նկարիչը՝ առես՝ ձգտել է արտայայտել իրանեան ժողովրդի քնարական ապրումներն մի խորհուրդով, արեւելեան մտորումների մի էջը:

«Վայելի՛ր գինի,

Քանգի չղգխեա Թւրքից եկար դու.

Եւ ուլայի ապրի՛ր,

Քանգի յայտնի չէ Եւր ես գրեմալու»:

Դա Իրանի պարճանքը կազմող հանճարեղ պոետ Օմար Նայսամի փիլիսոփայութիւնն է, որ գեղեցկորէն յատկանշել է նկարիչ վրձինած գե-

ղանի Իրանուհին: Առհասարակ, նկարն իր մեղմ, քնքշի քնարերգութեամբ, իր պատկերաւոր գեղեցիկ արտայայտութեամբ, ունի բանաստեղծական ու ազգապարկան խոշոր արժէք եւ իր կարմիր, ոսկեգոծ ու սեւ երանգները աշտնշելի ներդաշնակութեամբ սենեակի որմնակարների շարքում առանձնաբայտակ տեղ է դրաւում:

Ահա ձեզ մի այլ մեծադիր որմնակար: Դա նրբամարմին եւ վայելչակազմ մի նախելի Իրանուհի է, որի նուրբ դէմքի գծադրութիւնը, երազուն աչքերը, կամար սեւ յոնքերը եւ շնորհալի կազմուածքը նկարին տալիս են առանձին դրաշնութիւն: Իրանուհու խոհուն դէմքի վրայ արուեստագէտը՝ առես՝ ձգտել է արտայայտել նրա հոգու քնքշութիւնը, սրտի ազնւութիւնը եւ բնաւորութեան անսահման պարզութիւնն ու մեղմութիւնը: Կանգնել է նա իր սիրուն հասակով եւ ձախ ձեռքով բռնել մի հովահար, խի ալը քնքշութեամբ մօտեցրել է մէջքի ոսկէ դռտուն: Ժլոյթին փայլում են ոսկէ զոյգ մատանիները: Ազգապարկան տեսակէտից ուշադրաւ են վզի նւրբ մանակը, աղանջների երկար օղերը եւ գլխի ծաղկաւուն գլխարկը, բայց աւելի Թանկարժէք է ծաղկաւուն գեղեցիկ տարազը, որ ներքեւից վերնաւում է ա՛յնքան նուրբ շղարշով: Սերկ ոտքերին կրում է կարմիր կաշուէ կապանքներով փայտէ կոշիկներ:

Նկարում արտայայտուած բանաստեղծութիւնը եւ հոգեբանական նրբութիւնը հարազատ կերպով պատկերացնում են գեղեցիկ Իրանուհու սիրատոյնը սիրտը՝ իր սպասողական դրութեամբ: Որմնակարը խորապէս ինքնատիպ եւ անձնադրու՛մ արուեստի մի լաւագոյն արտագրութիւն է թէ՛ իր գեղարուեստական յղադրումով եւ թէ՛ իր քնարերգական բովանդակութեամբ:

Արձանագրուած որմնակարների շարքում գերեւից ժպտուն դէմքով նայում է մի այլ տիպար: Դա նրբակազմ մի երիտասարդ իշխան է, որ կանգնել է հարաւոր կեցուածքով եւ ալ ձեռքով բռնած երկար չիբուխը քնքշութեամբ հպել է չրթներին: Զախ ձեռքը դրել է ոսկէ դռտու մէջ, ուր խրել է ոսկեգոծ պատեանով մի փոքրիկ կիւ սուր, իսկ ձախ կողմը սեւ նուրբ ոլորուն թելով կախել է ոսկէ պատեանով մի փոքրիկ գանձակ: Ու գէրը զարգարում են նուրբ մաշիկներ: Իշխող

գլխաւոր դոյններն են՝ մուգ կարմիր, ոսկեզօծ, մուգ դեղին եւ սեւ։ Որմնակալը, զփախտաբաւ, շատ բան կորցրել է իւր գեղարուեստական ներուժիւնից։

Որմնանկարչական տարբեր առի տեղծագործութիւն է եւրոպական մի անորոշ գէմք, որի համաչափ մարմնի վրայ գեղեցիկ խելացի գլուխը իշխում է աղնուական եւ վիճ կեցութեամբով։ Արուեստական վարսեր կրող գլխին դրել է մարգարտազարդ մի թաղ։ Հագել է ծաղկաւուն մուգ-կարմիր պաշտօնական զգեստ։ Մէջքից կախել է մի երկար սուր, որ հանդարտ իշխում է ստեղծի ետեւից։ Այլ ձեռքով բռնել է մի փոքրիկ երկրագունդ, իշխող խաչով, իսկ ձախ ձեռքի քառակուսի թերթիկի վրայ նկարուած են թիւեր եւ Ֆրանսերէն եղծանաւած տառեր։ Կարգացում են միայն անվարժ գրչով գրուած չորս հայերէն տառեր, որոնք պատկերում են մի ամբողջ բառ, Փսսի։ Ենթադրուած է, որ դա Ֆրանսիայից իրան ժամանած առաջին դիւանագիտակն՝ ներկայացուցիչն է, որի մօտ դրուած թաւշեայ ծածկուցով սեղանի վրայ իշխում է մի գեղեցիկ ժամացոյց՝ յաղթական փոքրիկ արձանով։ Ներքեւում հանգչում է սեւ շնիկը։

Նոյնքան նուրբ արտադրութիւն է խարտիշահեր իշխանուհին, որի բարի, խոհական եւ փայտուն դէմքը հարազատ պատկերն է եւրոպացի կանանց։ Միշնչեւ կուրծքը բաց, մուգ-կարմիր տարազի ուսերը եւ վիզը զարդարում են սպիտակ կլոր շարան մարգարիտներ։ Դանգել է նա վիճ կեցութեամբով, փոքրիկ վարդափունջով ձեռին։ Դիւխին թեք դրել է մարգարտազարդ թաղանձան մի գլխարկ։ Նկարը կարող է նկարչական որեւէ թանկարանի զարդը կազմել։

Արեւի պէս փայտուն, խորունկ ու անուշ ակնարկով նայում է իրանական մի այլ գեղեցիկ իշխանուհի։ Նա՝ ասեա՝ ուղղում է խոսել ձեռք հետ, բանալ իւր սիրտը, իւր հոգին եւ անկեղծօրէն արտայայտել իւր զգացումները։ Երկու կողմից մինչեւ կուրծքը հանդարտ իշխող սեւ երկար հարուստ վարսերը, կամար սեւ յոնքերը, բարակ չրթները եւ փոքրիկ բերանը նրա ուրախ դէմքին առանձին փայլ են տալիս։ Հագել է

ծաղկաւուն մի թանկագին վերարկու, ներքեւից՝ մուգ-կարմիր չինդար։ Այլ ձեռքի վրայ բազմել է կարմրակտուց մի փոքրիկ թռչուն, իսկ ձախ ձեռքով կրթից բռնել է մի հասուն տանձ։ Կանաչ կոշիկներ կրող ստեղծի մօտ դրուած պնակում դարսուած են Նուռ, կարմիր խնձոր, սալոր։ Ոսկեզօծ, կանաչ, մուգ-կարմիր եւ սեւ երանգները գեղեցիկ կերպով իրար են ներդաշնակում։

Պորթափանց արուեստի լաւագոյն գործ է նաեւ վերջին դռնակում վրձնուած երիտասարդ իրանուհին, որ խորհրդանշին է իրանի գեղեցկուհիները։ Ձախ ձեռքով բռնել է դիւռ փոքրիկ շիւղ, իսկ աջը մեղմօքէն դրել կրծքին։ Զկոյթի վրայ փայլում է արմատ քարով մի ոսկի մատանի։ Հագել է մուգ-կարմիր մի պարզ զգեստ։

Կանգ չեմ առնում միւս երեք որմնանկարներէ վրայ, որ նոյնպէս նշում են նկարչի գեղարուեստական կարողութիւնը։ Ժամանակը, դժբախտաբար, իր աւերիչ դողով դրել է գրանցից յատկապէս երկուսի վրայ։

**

Պէտք է անձամբ տեսնել Նոր-Ջուղայի Բուդանց ապարանքի Նիք դարի որմնանկարչական արուեստի պատմական մեծադէր յուշարձանները, որոնցից մանաւանդ մի քանիսը հարազատութեամբ պահպանուել են, որպէսզի իրենց լուսխմամբ ցայուն զաղափար տան թէ՛ Սեֆեւեան արուեստի խորութեան, գեղեցկութեան ու ներուժեան եւ թէ՛ ստեղծագործական խոշոր ձիրքի մասին անյայտ նկարի, որ իւր վարպետ եւ համարձակ վրձնող նկարի է մէկը միւսից կենդանի տիպարներ, ա՛նքաւ հատուկեամբ միմեանց ներգաշնակելով գունագեղ, ալլապան բանգները, յոյսն ու սուրները։ Առհասարակ, նա իւր պատմաշըլանում փայլել է որպէս վարպետ դիմանկարիչ, որպէս հոգեբան-քանադեղծ արուեստագէտ եւ որպէս ազգագրագէտ-նկարիչ, երեւոյթներ, որոնք դասում են նրան իւր դարի իրանի առաջնակարգ նկարիչների շարքին։

Թէեքան, Յունուար 1947

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ